

G.ay Miltipuand 6800

Uujuhuh 1-2

2 nungnig  
1892

2010

三

5 Nr. Հրատարակութիւն Հնչակեան Խուսակցութեան. №5.

U o g h u L h u m a h u n . - V r u t u t u p u n .

## ՄԱՅԻՍԻ ՄԵԿԻ

ԱՐԵՎԵՐԴԵԿԱ ՀԱՐԱՋՈՎԵՎԵՐԻՆ ՏԸՆ

ԲԱՆԻՈՐՆԵՐԻ.

Գ. ՊԵՏՐՈՎԻ

4

Digitized by Google

Պ. ԵՐԱԼԻՇՈՒԹ

“ԲԵՎԻԱՐԵԿԱՆ ՇՐՋՈՒԹՈՒ”

ԳՐՈՒԹԻՒՑ

## Թարգմանութիւն.

q. 11b p 25 սահմանիմ.

1892.

## ՀԱՅՈՒԹԻՒՆ ԱԶԱՏ ՏՊԱՐԵՆ

לונדון.

327·31

7-68

327.31

Դ-68

5 №. Հրատարակութիւն Հնչակեան կուսակցութեան. № 5.

Սօցիալիստական գրադարան.

Արմ.

2-4183 ա

2-4183 ա

## ՄԱՅԻՍԻ ՄԵԿՐ.

ԱՐԵՆԱՐԵՑ ՀԵՐԵՎԵՐՀԱՅԻՆ ՏԾՈՒ

ԲԱՆԻՈՐՆԵՐԻ.

Գ. ՊԼԵԽԱՆՕՎԻ.

Թարգմանութիւն.

Գիրը 25 սանտիմ.

ԻԽ. № 17426  
1892.

ՀԱՅԱՍՏԱՆ ԱԶԱՏ ՏՊԱՐԱՆ  
ԼՈՆԴՈՆ.

5001

## ՄԵՅԻՄ ՄԵԿԻ:

ԵՐԵՎԱՐԵՍ ՀԱՄԵԼԵՐՀՅՈՒՆԻ 80Ի

ԲԱՆԻՈՐՆԵՐԻ.

Եւրոպայի ու Ամերիկայի բոլոր քաղաքակրթված երկրներում աշակ արդեն երկրորդ տարին է, \*) ինչ տեղի են ունենում Ազրիլի 19-ին (այնտեղի օրացցոյվ Մայիսի 1-ին) բանորական մեծ ցոյցեր: «Բարեսփրտ աղաները» — գործարանատէրերը, վաճառականները, կայտածատէրերը, բանկերի (հանգե) տէրերն ու դըրանց բոլոր արքանեակները (կարձ—ամբողջ բուրժուազիան) այդ ցոյցերից շատ են վախենում: Այնպէս են վախենում, որ կարծես թէ բանորները պատրաստված են նրանց ամենքին կոտորելու: Զօրքերը շարժվում են, ոստիկաններն աջ ու ձախ ընկնում, խորհուրդ խորհրդի վրայ են պնում վրդովֆած մինիստրները (նաև խարարները), — մի խօսքով, ասես մի մեծ փորձակը է

\*) Այն գրուածքը լոյս է տեսել 1891 թ.

վրա համելու, հենց այն է աշխարհս տակն ու վրա է լինելու: Հիմա տեսէք, թէ վիեննայում (Աւստրիայի մայրաքաղաքը) անցած տարւայ բանւորական ցցցի նախըն թաց օրը ի՞նչ դող էր ընկել “բարեսիրտ աղաներին ջանը:

“Զինւորները կանգնած են պատրաստի. տների դըռները փակիված. բնակարաններում ապրուստի պաշարներ են պատրաստված, ասես թէ զինւորական պաշարումն պիտի լինի. գործերը գագարած են. կիներն ու երեխաները չեն համարձակվում փողոց գուրս գալու . . .”\*)

Բա՛հ, այս ի՞նչ զալ մաղալ եւ ի՞նչն է եղել այդ երկիրի պատճառը: Այն, որ բանւուրները վըճռ ել են պահանջել՝ կարճացնել իրանց անց աշխատանքի օրը մինչեւ ութ ժամ: Ահա բողը: Եւ ահա թէ ի՞նչցի են լեղապատառ լինելու չափ վախեցել “բարեսիրտ աղաները”:

Մէջէ դա այդքան սարսափելի է: Ում ի՞նչպէս էլ որ լինի—իսկ “բարի աղաներին համար դա, յիրաւի, շատ սարսափելի է: Սարսափելի է այն պատճառով, որ ժամանակը վատ է,—մէկ էլ տեսար բանւոր դասակարդի կողերը խաղացն, բազուկները բացվեցան եւ այնպէս զարկեց այդ ամբողջ պատուելի հասարակութեան, որ նրանից հետք էլ չը մնաց: Սարսափելի է նաեւ այն պատճառով, որ բանւորական (աշխատանքի) օրւայ ժամերի պակասեցնելն այնչափ ձեռնտու չէ թւում այն ամենքին, որ իրանք չեն աշխատում, չեն բանում: այլ ապրում են բանւորների, աշխատատօրների հաշով:

Իսկ բանւորների համար շատ ձեռնտու է բանւորական օրի պակասեցնելու: Եւ այդ պատճառով նրանք միաձայն պահանջում են այդ քիչացումը և նդիլիայում ու:

\*) Այդպէս է ասում Ալիեննայի Ազատ Աշխատավուլը թէրթը, իր 1890 թ. 19 Ապրիլի (Այլիսի 1) համարումը:

Գրանսիայում, գերմանիայումու Աւստրիայում, Եւրոպայումու Ամերիկայում:

Տիւնենք, թէ բանն ինչումն է: Ինչու համար է բանւորներին ձեռնտու բանւորական կարծ օրը:

I.

Մարգերենկը աւատական (Ճորտութեան) օրէնքի ժամանակները: Կալածատէրը իր գիւղացիներին տալիս էր հող: \*) Գիւղացիները մշակում էին այդ հողը եւ զրանով կերակրվում: Այդ հողը մշակելու համար նրանց տրվում էր շաբաթը մի տեղ երկու, միւս տեղ երեք օր: Շաբաթւայ մնացած օրերը նրանք աշխատում էին կալւածատէրի հողի վրա եւ իրանց այդ աշխատանքի համար ունիչ չէին ստանում: Կալածատէրը ծախտում էր այդ հացը, որ ցանված, հաւաքված ու վերջն էլ տարված էր վաճառականի մօտ դարձեալ ճորտ-գիւղացիների ձիռքով եւ իր գրապանն էր գնում վաճառականից ստացած կլորիկ ստակները: Այդ ստակները բայց ու մուռ մէ ին նրա եկամուտը բայց որտեղից էր առաջ գալիս այդ եկամուտը: Հասկանալի է, թէ որտեղից կալւածատէրի էր գիւղացը ու ձրի աշխատանքը:

Այժմ աւատական իրաւունք ըս կայ: Այժմ գիւղացիներն ու բանւորներն աղատ են: Հիմա նրանք աշխատում են աղատ կերպով վարձվելով: Եւ դա, ի հարկէ,

\*) Սակայն դա այդպէս ասվումէ, թէ տալիս էր հող իսկապէս հողն առաջ պատիկանում էր գիւղացիներին, իսկ կալածատէրերը նրանցից խլել են այդ հողը եւ յետոյ սկսել “տալու նոյն իսկ իրանց գիւղացիներին՝ փոխադապակէս նրանց բանեցնելու համար:

աւելի լաւ է, քան թէ աշխատել ստրկական բոլոնցի տակ:  
Քայց չը պիտի կարծել, որ վարձու բանւորն աշխատում  
է միմիայն իրան համար: Ոչ նա էլ աշխատում է նոյն-  
պէս եւ իր տիրոջ համար: Տիր ո՞Չ (գործարանատէրի,  
կալածատէրի, որի հողը մշակվում է վարձու աշխա-  
տաւորների ձեռքով) եկամուտը գոյան ում է  
վարձու բանւորն երի ձրի աշխատանքով:

Մենք այս լոպէիս կը բացատրենք այդ: Իսկ հիմա  
վերադառնանք այն աղախն, որ ճորտերի տէր է:  
Ենթադրենք, թէ գուրու եկամ մէկ այնպիսի օրէնք,  
որով ճորտերին արգելվում է կալածատէրի համար  
աշխատել շաբաթը մէկ օրից աւելի: Ի՞նչ կը լինէր այդ  
օրէնքի հետեւանքը:

Ճորտ գիւղացին կը կարողանար աւելի լաւ մշակել  
իր սեփական արտու: Հանկիստ առնելու համար նա կա-  
րող կը լինէր մէկ օր աւելի ունենալ: Կարող կը լինէր  
պարապլել որ եւ է ուրիշ արհեստով Յամենայն դէպս  
եւ ինչպէս էլ որ անելու լինէր գիւղացին, նոր օրէնքը  
մեծ օգուտ կը բերէր նրան:

Ի հարկէ, օգտվելով իր իշխանութիւնից, կալածա-  
տէրը գիւղացու եթէ հոգին չը համէր՝ կաշին կը քերթէր:  
Նա կարող էր հոգային տուրքը գիւղացուց պահանջել  
դրամով. նա կարող էր պակասացնել նրա վարելահո-  
գը (թէ, ող մէկ էլ քեզնից ոչինչ խեր չը կայ) եւ  
այլն: Այդ բոլորը շատ հնարաւոր էր, քանի որ կալ-  
ածատէրի իշխանութիւնն անսահման էր: Այդ պատ-  
ճառով այն օրէնքի վրա, որն գիւղացուն արգելում է  
շաբաթւայ մէջ մէկ օրից աւելի աշխատել կալածատէ-  
րի համար, պէտք էր աւելացնել կրկին մէկ օրէնք, ո-  
րով կալածատէրին արգելվում է քիչացնել գիւղացու  
վարելահոգը, հողային տուրքը պահանջել նրանից դրամով  
եւ լնդհանրապէս վերցնել նրանից այն կորուստների

գորխարէնը որ կը բերէր նրան առաջին օրէնքը:  
Ենթադրենք ուրեմն, որ կառավարութիւնը կալա-  
ծատէրին արգելում է գիւղացիներից պահանջել այդ  
կորուստները: Ի՞նչ աեղի կունենար այդ ժամանակ մեր  
կալածատէրի գիւղատնախութեան մէջ:

Նրա մօտ այդ ժամանակ բանւորների թիւը շատ  
քիչ կը լինէր: Նրա հողը մշակելու համար իւրաքան-  
չելու գիւղացին նրա մօտ անցնում էր շաբաթը երեք օր:  
Այժմ ամեն-մի գիւղացի աշխատում էր նրա համար մի-  
այն մէկ օր: Պարզ է, որ կալածատէրի ամբողջ հողը  
այժմ չէ կարող մշակվել իր ճորտերով: Գիցուք թէ նա  
ունի 300 գէսիատին:\*) Եւ այդ 300 գէսիատին հողի մը-  
շակութեան վրա այդ բոլոր գիւղացիներն առաջ պէտք է  
աշխատէին շաբաթւայ երեք օրը: Հիմա նրանք աշխա-  
տում են միայն մէկ օր: Ուրեմն նրանք մշակում են միայն  
100 գէսիատին: Բայց ի՞նչ կանէ կալածատէրը մնա-  
ցածի հետ:

Դրանց մշակութեան համար նա պէտք է վարձէ  
նոր աշխատաւորներ, որոնց պիտի վճարէ ստակավ  
կամ հոգավ: Գիցուք թէ գտնվում լինէին այնպիսի ա-  
զատ աշխատաւորներ, որոնք մինչեւ այդ նոր օրէնքների  
յայտարարումը անգործ թափառում լինէին մի գիւղը  
միտքը: Հէնց զբանց էլ կը դիմէր մեր կալածատէրը.  
Նրանք կը ստանային նրանից աշխատութիւն եւ դրա  
հետ միասին նաև մի պատճռ հաց:

Կալածատէրին ձեռնոտու չէր լինիլ ծախսեր անել  
այդ աշխատաւորներին վարձելու համար: Բայց աշխա-

\*) Մէկ դէս ի ա տ ի ն ը հաւասար է ֆրանսիական  
1,1 հեկ ա ր ի եւ տաճկական 11,8 դէս օ ն ի ւ մի  
(deuumum):

տաւորներին ձեռնտու կը լինէր աշխատութիւն գտնել: Հետեւապէս, այն նոր օրէնքները, որ ձեռնտու չէին լինիլ կալածատէրի համար, ձեռնտու կը լինէին նրա ճորտերի, որպէս եւ այն աղատ մարդկանց համար, ուրոնք թափառում էին անդործ ու անսպաստան: Կալածատէրը կը գանգատվէր նոր օրէնքներից: Կա կասէր, թէ նրանց հնարել են չար մարդիկը: Խոկ ճորտ գիւղացիները եւ այն աղատ մարդիկը որ անդործ թափառական էին, ուրախութեամբ կողջունէին այդ նոր օրէնքները:

Բայց գուցէ մեր կալածատէրն իր հողերը սկսէր մշակել մեքենաներով: Յայտնի է, որ մեքենայով թէ գաշտում եւ թէ արհեստանոցում կարելի է գործել շատ անգամ աւելի, քան առանց մեքենայի: Այդ պատճառով, գնելով մեքենաներ, մեր կալածատէրը թերեւս կարողանար առանց նոր աշխատաւորներ վարձելու՝ մի կերպ եւ աւ գնալ իր ճորտերով, որ աշխատում են շաբաթւայ մէջ մէկ օրից ոչ աւելի:

Բայց որպէս զի կալածատէրը կարողանայ գընել մեքենաներ, — պէտք է այդ մեքենաները շինվեն: Խոկ դրանց շինում են կրկին բանւորները: Հետեւաբար, ինչքան շատ մեքենայ գնեն կալածատէրերը, նշոյնքան շատ բանւոր պէտք է վարձվեն այն գործարաններում, որունել պատրաստում են մեքենաներ: Այն մարդերից ոմանք, որ առաջ անդործ թափառում էին, այժմ տեղ կը գտնեն այդպիսի գործարաններում: Եւ այդ մարդիկըն ուրախութեամբ կողջունէին այն օրէնքների երեւան դալու, որոնցով ճորտերին արգելվում էր կալածատէրերի համար շաբաթը մէկ օրից աւելի աշխատել:

Երեւակայենք հիմա այսպիսի մի գէպք: Ճորտ գիւղացիները որ կալածատէրի համար աշխատում էին շաբաթը մէկ օրից ոչ աւելի, իրանց աղատ ժամանակը զանք են անում որբան կարելի է շատ սովորել ուսա-

նել: Եւ կուսանեն նրանք մէկ առանձին գիտութիւն, այն գիտութիւնը որը ցցյ է տալիս, թէ ի՞նչ կերպով կարող են նրանք բոլորովին աղատվել կալածատէրերից, — այսինքն ոչ միայն չաշխատել նրա համար շաբաթը մէկ օր իսկ, այլ եւ կալածատէրի ամբողջ հողը գարձնել իրանց սեփականութիւն: Այն ժամանակ նոր օրէնքները նրանց համար աւելի օգտաւէտ կը յայտնվէին, եւ աւելի էլ հասկանալի կը լինէր, թէ ինչու կալածատէրերը չեն սիրում այդ օրէնքները:

Այս ամենը ճշմարտութեան շատ մօտ բան չէ: Ճորտատիրական իրաւունքի ժամանակ այնպիսի օրէնքներ չը կային, որոնցով գիւղացիներին արգելվէր կալածատէրի համար մէկ օրից աւելի աշխատել շաբաթւան մէջ: Եթէ նյոյն իսկ լինէին այդպիսի օրէնքներ՝ հաղիւ թէ ճորտ գիւղացիները սկսէին ուսանել: Եւ շատ գժուար, աւելի ճիշգ՝ անկարելի կը լինէր նրանց հասկանալ այնպիսի գիտութիւն, որը սովորեցնէր նրանց, թէ ինչպէս պէտք է աղատվել կալածատէրերից եւ մերժնել նրանցից հողը:

Բայց այն, ինչ բոլորովին հեռու է ճշմարտութիւնից, երբ մեր խօսքը ճորտ գիւղացիների մասին է, կ ատ ար եւ աւ ճշմարտութիւն է, երբ մեր խօսքը այ ժմէ ան վարձութիւն երին է վերաբեր առ ու բան սորուների ին է:

Կերպայումն բանւորները կ ար ո զ ե ն ձեռք բերել այնպիսի օրէնքներ, որոնք կը կարձացնեն այն աշխատանքի ժամանակը ժամանակը, որ նրանք գործադրում են ձրի կերպով իրանց տէրերի համար: Այժմ բանւորների համար գիւղին է հասկանալ այն գիտութիւնը, որը նրանց ցցյ կը տայ, թէ նրանք ի՞նչ կերպով կարող են բոլորովին աղատվել իրանց տէրերից եւ կաղմակերպել հասարակական նոր կերպեր: Եւ բանւորները ոչ միայն կարող կը լինեն հասկանալ այդ բարերար գիտութիւնը: Նրանք

արդէն հասկանում են նրան: Նրանք օրից օր աւելի ու աւելի լաւ են հասկանում նրան: Բայց նըրանք ազատ ժամանակ շատ քիչ ունեն: Այդ պատճառով էլ ուսանում են գեր շատ դանդաղ կերպով: Եթէ բանորներին աջողվէր կարծացնել տալիրանց աշխատանքի օրը մինչեւ ուժ ժամ այդ գէպքում նրանք աւելի ժամանակ կունենային. Նրանք աւելի շատ կուսանէին, եւ աւելի շուտ կաղատվէին իրանց աէրերի լուծից:

II.

Մենք ասացինք, որ ու է ը ի (կապիտալիստ) եւ կ ամուտը գոյանում է բան և որի ձրի աշխատանքով:

Դա զգումէ ամենմի բանոր: Բայց ամենմէին էլ դա պարզ չէ հասկանում: Եւ զարմանալի չէ: Գեր հեռու չէ այն ժամանակը, երբ դա վատ էին հասկանում ամենառանեալ գիտուն մարդիկը: Այժմ գիտութիւնը (քաղաքանատեսութիւնը) լաւ լուսաբանել է այդ գործը: Այժմ չէ կարելի կասկած ունենալ այն բանի մէջ որ աշխատառը ձրի է աշխատում կապիտալիստի համար, որպէս ճորտ գիւղացին ձրի եր աշխատում կալածատէրի համար:

Առաջին հայեացքից դա շատ տարօրինակ է ժմում: Ի՞նչպէս թէ — ձրի: Եէ որ աէրը այսպէս կամ այնպէս, վճարում է հօ իր բանորին: Էլ ի՞նչ խօսք բանորի ձրի աշխատանքի մասին:

Ճիշդ է, աէրը վճարում է բանորին նրա աշխատանքի համար: Բայց եւ այնպէս բանորը ձրի է աշխատում տէրի համար:

Աշխատանքի վճարը — դա բանող մարդու ուտեստն է, ինչպէս գարին, խոտն ու յարդը բանող ձիու ուտեստն է: Զէ կարելի չը կերակրել նաեւ բանորին: Սակայն ոչ դա բոլորովին այդպէս չէ: Տէրը միշտ կաշխատէ կերակրել ձիուն, որովհետեւ ձին նրա սեփականն է: Նրա մահը վնաս կը բերէ: Իսկ մի, երկու, երեք, եւ մինչեւ իսկ հազարարոր բանորների մահը ոչինչ վնաս չէ տալիս: Մահութեան շատութիւնը բանորների մէջ միայն այն ժամանակ վնաս կըտար աէրերին, երբ կենդանի մնացողների թիւն աւելի քիչ լինէր, քան պէտք էր տէրերին: Տեսէք թէ ինչ է լինում Ռուսաստանի հարաւային, ամայի նահանգներում, երբ ամառը հունձը ժողովելու համար շատ քիւղացիներ են դալիս: Գրանցեց իւրաքանչիւրին ակամայ թանկ են վճարում, եւ կալածատէրերը դանգատվում են վնասների մասին: Մի եւ նոյնը կը լինէր, եթէ ամբողջ Ռուսաստանում բանորների թիւը քիչ յայտնէր: Այ բարձրանար աշխատանքի վճարը, աէրերը կը սկսէին պուալ թէ նրանց տունը քանդվում է: Իսկ քանի որ այդ ըստ կայ, բանորը կարող է մեռնել հանգիստ խղճով: Նրա մահը ոչ մի կապիտալիստի չը վըշտացնիլ:

Տէրը վճարում է բանորին նրա աշխատանքի համար: Կա աէրակրում էն նրան եւ իրան էլ անուանում է նրա բարերարը: Բայց չէ որ կալածատէրն էլ կերակրում էր իր ճորտերին: Կա տալիս էր նրանց հող, կամտալիս էր ամսական, կամ պահումու կերակրում էր իր մօտ ածառայանցում: Ճորտ գիւղացին աղալից ըստացած իր ապրուստի այդ միջոցների փոխարէնը հատուցանում էր իր աշխատանքով: Գրա համար պէտք էր, զիցուք, շաբաթը երեք օր: Բայց կալածատէրի համար դա քիչ էր: Նրան պէտք էր իր կայքերից ե կ ամուտ ստանալ: Կա

գիւղացիներին ստիպումէր իր հողի վրա աշխատել մնացած երեք օրն էլ իսկ երբեմն նաեւ կիրակի օրը: Կալւածատէրի հողի վրա գործադրած հենց այդ աշխատանքով էլ գոյանում էր կալւածատէրի եկամուտը: Եւ ճորտերի այդ աշխատանքը միայն կարելի էր կռչել ձրի աշխատանքը: Քանի որ ճորտն աշխատումէր իր ապրուտի այն միջոցների փոխարէնք, որ ստանումէր կալւածատէրից, նա աշխատում էր ոչ թէ կալւածատէրի, այլ իրան համար:

Նցնն անումէ նաեւ վարձու բանորը: Կա մասամբ աշխատում է իրան համար եւ մասամբ տէրի համար: Գործարանի բանորն, ասենք, ստանում է օրը 50 կոպէկ: Այդ ստակի փոխանակ նա պէտք է աշխատէ տիրոջ համար: Կա կը կատարէ այդ աշխատանքը, դիցուք, վեց ժամւյ լնթացքում: Եթէ գործարանում աշխատութիւնը սկսումէ առաւօտքը ժամը հինգին, այն ժամանակ ճաշի ժամին բանորն իր աշխատանքով կը վերադարձնէ տէրին այն բոլորը, ինչ ստացել է նրանից: Բայց գործարանատէթին հարկաւոր է եկամուտ, շահ հարկաւոր է հասոյթ: Եւ աշանա գործաւորին ըստիպում է աշխատել մինչեւ երեկոյեան ժամը ութը: Այդ բոլոր ժամանակը գործաւորն աշխատում է ձըրի եւ հէնց այդ ձրի աշխատանքը: Այդ մուլտամէրին էլ գործաւորի աշխատում է ձըրի եւ ուղարկում է ապրուտի աշխատանքով: \*

\* ) Ով ուղում է զրա մասին կարգալ մանրամասն կերպով, թող վերցնէ Դիկշտէնի գրքոյկը — “ Ով ինչով է ապրում ”:

Ծ. Հ.

Այդ գրքոյկը հայերէն թարգմանութեամբ գրտերլումէ Հնչ կուսակցութեան հրատարակութիւնների շարքում: № 4:

Ծ. Թ.

Մեզանում թուսաստանում գործարանների բանորների աշխատանքի օրը տեսում է 13-14 ժամ: \*) Այդ 13 կամ 14 ժամից բանորն իրան համար (այսինքն իր ըստացած վճարի փոխարէնը հատուցանելու վրա) աշխատում է ամենաշատը 5 ժամ: Իսկ մնացած ամբողջ ժամանակը աշխատումէ ձրի գործարանատէրի համար: Եւ աշխատում է նա շատ լաւ կերպով: Այսպէս որ գործարանատէրն իր կապիտալի վրա աւելացնում է 40-ական, 50-ական, երբեմն մինչեւ իսկ 60-ական տոկոս: Դա նշանակում է թէ իւրաքանչիւր բուբլը տալիս է նրան 40, 50 կամ մինչեւ իսկ 60 կոպէկ, իւրաքանչիւր հազար բուբլը տալիս է 400, 500 կամ մինչեւ իսկ 600 բուբլ շահ: Ինչպէս տեսնում էր, շատ ձեռնտու բան է լինել բանող մարդու և բանու աշխատանքում:

Այսպէս, կապիտալիստի եկամուտը գոյանում է բանորի ձրի աշխատանքով:

Ինըն ըստ ինքեան հասկանալի է, որ բանորն ինչքան շատ աշխատէ տէրի համար, այնքան ձեռնտու կը լինի այս վերջինիս, այնքան աւելի կը լինի վերջինիս շահը: Իսկ բանորն աշխատումէ տէրի համար այնքան շատ, որքան երկար է բանու որ ական (աշխատանքի) օրը: Ուրեմն, տէրին ձեռնտու է երկար ացնել բանու որ ական օրը:

Հապա բանորին: Իսկ եւ իսկ գրա հակառակը: Բանու որին ձեռնտու է կար ճացնել աշխատանքի օրը:

Եթէ մեր գործարանի բանորները 13-14 ժամ-

\*) Իսկ կովկասում, օր բագու եւ բաթում քաղաքներում, բանորներին աշխատանքում են օրական 16-17 իւր մինչեւ իսկ երեմն 18 ժամ ( բաթումում):

Ծ. Թ.

ւայ փոխարէն սկսէին աշխատել միայն 10-ական ժամ՝  
24 ժամւայ միջոցում, այդ գէպքում նրանք թէ աւելի  
քիչ կը յոդնէին եւ թէ կը վաստակէ ին աւելի,  
քան այդ է:

Առաջին անգամից դա թերեւս այնքան էլ հասկանալի  
չէ: Մենք այս րոպէիս օրինակով կը պարզաբանենք այդ:

Վերցնենք գործւածքի, ոստայնի գործարան եւ են-  
թաղրենք, թէ այնտեղ աշխատում են 60 մարդ: Բան-  
տորական օրը տեսումէ 10 ժամ: Ուրեմն բոլոր 60 մար-  
դը միասին աշխատում են 600 ժամ (60 մարդ, 10-  
ական ժամ իւրաքանչիւրը): Այդ 600 ժամայ ընթաց-  
քում գործվումէ սյօնինչ չափով կտաւ: Բայց աչա տէ-  
րը որոշումէ, որ այնուհետեւ բանւորները պէտք է աշխա-  
տեն ոչ թէ 10-ական, այլ 12-ական ժամ: Ասվեց եւ ար-  
վեց: Գլխաւոր ուստան (վարպետը) բանւորներին յայտարա-  
րում է տիրոջնոր կարգադրութեան մասին: Բանւորներն  
անբաւական են: Նրանք մրմթնիւմ են: Բայց ուստան  
սպառնումէ ձամբայ դնել եւ նրանք հնազանդվում են:  
Ի՞նչ է դուրս գալիս:

Որպէս զի տիրոջ ամբողջ գործը շինվէ պատրաստվէ,  
հարկաւոր է 600 բանւորական ժամամեն-մէկ օր: Ա-  
ռաջ իւրաքանչիւր ոստայնանկն աշխատում էր 10 ժամ  
եւ հարկաւոր էր զրա համար 60 ոստայնանկ: Այ ժ մ  
իւրաքանչիւր ոստայնանկ աշխատումէ 12 ժամ եւ աի-  
րոջը հարկաւոր է ունենալ միմիայն 50 մարդ, (որովհե-  
տեւ այդ 50 մարդը, աշխատելով օրական 12 ժամ,  
լրացնում են 600 բանւորական ժամ, եւ հէնց 600  
բանւորական ժամ էլ պէտք էր, որ տիրոջ գործը լըրաց-  
վէ): Այդ պատճառով տէրը ճամբայ է  
դնում տառը բանւոր:

Նրանք գնում են մէկ ուրիշ գործարանատէրի մօտ:  
Բայց սա էլ սկսէլ է բանւորներին բանեցնել օրը 12

ժամ եւ այդ պատճառով ճանապարհ է դրել շատ բան-  
ւորներ: Նրա մօտ հիմն գործ գոնել չի լինի: Մեր  
խեղճերը գնում են երրորդ, չորրորդ գործարանատէրի  
մօտ: Ըմեն տեղ մի եւ նյոն պատասխանը: բանւորի պէտք  
չունենք, մերոնցը ճանապարհ ենք գնում: Բայց անօ-  
ժութիւնից հօ չեն մեռնելու: Եւ գործից ընկած ոս-  
տայնանիները զանք են անում հրապուրել տէրերին  
վարձվելու ձեռնոտու պայմաններով: Նրանք պատրաստ են  
աշխատելու թէկուղ կէս գնով: Տէրերն օդավում են գը-  
րանից եւ քիչացնում իրանց մօտ եղած բոլոր բանւորնե-  
րի վճարը: «Ովքաւական չէ, թող կողչէ գնա, ձեզ նը-  
ման շատերն անդորդ թափառում են»: Բանւորները դար-  
ձեալ հնազանդվում են. արդարեւ, տեղ գտնելու հնազը  
չունեն: Այդպիսով ընկնում է աշխատանքի վճարը,  
որովհէտեւ գործ չունեցող բանւորներն երն  
ամեն տէղ դինը քիչացնում են:

Գիտութիւնը (սատեիստիկան, վի-  
ճակագրութիւնը) ցոյց է տվել որ բան-  
ւորն երն ամենից քիչ վաստակում են  
այն արհեստաներում որտեղ բանւոր ա-  
կան օրը ամենից երկար է: Այդ բանը շատ  
պատճառներ ունի: Բայց կարեւոր պատճառներից  
մէկն այն է, որ ինչքան երկար լինի բանւորական օրը  
տէրերն էլ այնքան բանւորների քիչ պէտք կունենան,  
իսկ ինչքան քիչ բանւորների պէտք ունենան տէրերը,  
նոյնքան աւելի կրնկնէ: «Բանուղ ձեռն երի գինը»:

Հիմն մենք գիտենք, թէ բանւորական օրի երկա-  
րացնելը ինչ բանի է յանդում: Ցեսնենք, թէ որ է տա-  
նում նրա կարձագնելը:

Գուք ինքներդ հեշտութեամբ կը հասկանաք այդ:  
Դիշուք թէ մեր գործւածքի, ոստայնի գործարանի բան-  
ւորները կրկին սկսեցին աշխատել 10-ական ժամ: Այդ

դէպօւմ գործարանատէրը չէ կարող բաւականանալ 50  
ոստայնախերով։ Որպէս զի գործվէ այնքան ապրանք,  
որքան գործվում էր առաջ նրան հարկաւոր է 60 բան-  
ւոր։ Նա վարձումէ նրանց, որոնք գործ ըստնեն։ Գործ-  
ութեալով այդ մարդիկն այլ եւս չեն քիչացնել տալիս ի-  
րանց և ձեռն երին գինը։ Այժմ տէլն արդէն գիտէ,  
որ այնքան էլյարմար չէ բանւորներին ճնշել եթէ  
գուրս գան, այն ժամանակ գծուար կը լինի գտնելնո-  
րիբին։ Եւ աշա նա դառնում է աւելի մեղմ, աւելի զի-  
րիբին։ Բանւորներն ընտրում են յարմար ժամանակը եւ  
ջանող։ Բանւորներն ընտրում են յարմար ժամանակը եւ  
պահանջում իրանց վճարի աւելացումը։ Տէրը զիջանում է։

Այսպէս, բանւորակ ան օրւայ կարձաց ը-  
ն ելուց աւելանում է աշխատանքի վճարը։

Բանւորներն այդ պէտք է իմանան եւ ըստ մոռանան։  
Ժատ անդամ նրանց թւումէ, թէ որքան շատ աշխատեն,  
շատ անդամ նրանց թւումէ, թէ որքան շատ աշխատեն,  
այնքան շատ պիտի ստանան։ Բայց նրանք չար ա-  
շար իւաբ վում են։ Դսկալէս գուրս է գալիս, որ  
ինչքան շատ են նրանք աշխատում, այն-  
քան էլքի չեն ստանում։

Այդ պատճառով բանւորները միշտ միշտ  
էտք է ջանան կարձացնել իրանց բան-  
ուորակ ան (աշխատանքի) օրը։


Ի հարկէ, թէ լոկ մի բանւոր մենակ սկսէր աշ-  
խատել աւելի քիչ քան իր ընկերները այդ գէպօւմ  
իստեւ կամ թէ նրա վար-  
նրան կը վունտէին գործարանից եւ կամ թէ նրա վար-  
նից կը հանէին իր պարապ մնացած ժամերի փոխա-  
նակը, հարկաւ, տուգանիներով հանդերձ։ Վատ կը լի-  
նակը, հարկաւ, տուգանիներով հանդերձ։ Զեռնուու չէ, իմար-  
նէր այդպիսի բանւորի հալը։ Զեռնուու չէ, իմար-  
նէր կարձացնել բանւորական օրը առ անձին ա-  
ռան է կարձացնել բանւորական օրը առ անձին ա-  
ռան է կարձացնել բանւորական օրը, երբ այդ անում  
իսելացի է կարձացնել բանւորական օրը, երբ այդ անում  
ինը բոլոր բանւորները միշտ անին։

Գուցէ ոմանք ասեն, թէ այն գէպօւմ, երբ բան-  
ուորներին վճար վում է հատուվ (ամեն-մէկ շի-  
նած ապրանքի համար առանձին), նրանց ձեռնուու է եր-  
կարացնել եւ ոչ թէ կարձացնել իրանց բանւորական օրը։  
Դա սխալ է։

Հատով վճարի ժամանակ բանւորը հէնց նյնպէս  
ձրի է աշխատում գործարանատէրի համար, որպէս եւ  
օրական վճարի ժամանակ։ Եթէ մի հատ ապրանքի հա-  
մար աշխատաւորը ստանումէ, ասենք, 10 կոպէկ, այդ  
գէպօւմ բանւորի շնած մի եւ նյն հատ ապրանքը տա-  
լիս է տիրոջն առնուազն 10 եւ մինչեւ իսկ 15 եւ 20  
կոպէկ շահ։ Ուբան շատ հատիկ ապրանք պատրաստէ  
բանւորը, այնքան շահաւոր կը լինի տէրերի համար։ Մինչ-  
դեռ բանւորն իր կաշից էլ գուրս է գալիս, որ աւելի շատ  
պատրաստէ։ Այդ պատճառով տէրերը շատ են սիրում  
հատով աշխատութիւնը։ Այդ կերպով նրանք կարող են  
բանւորից գուրս պոկելան համեմատ աւելի, քան օրավարձով։  
Բայց հատով վճարված ժամանակ բանւորը չափա-  
զանց աշխատելով իր գլխին զարդ է շնում։ Գործարանա-  
տէրին հարկաւոր է, օրինակ, 10,000 հատ ապրանք տա-  
րեկան։ Իւրաքանչիւր առանձին բանւորը որքան շատ այդ-  
պիսի հատեր, կտորներ պատրաստէ, նյնքան քիչ բան-  
ուորներ պէտք է վարձէ տէրը։ Իսկ մենք գիտենք արդէն,  
թէ որքան քիչ բանւորների պէտք ունենան տէրերը, այն-  
քան ցածր կը լինի աշխատանքի վճարը։

Հատով վճարված միջոցին որքան շատ է աշխատում  
իւրաքանչիւր առանձին բանւորը, այնքան քիչ է նա ստա-  
նում ամեն-մի հատի համար։ Ուրեմն մն հատուվ վը-  
ճար ի ժամանակ կն էլ բանւորներին ձեռն-  
ուոր է աշխատանքի օրի կարձացնելը։

Մեզ մօտ (Ռուսաստանում) Այլդիմիրսկ գործարա-  
նական գաւառում բանւորական օրը առ առանձին կարգ,  
ուստի առանձին բանւորական օրը առ առանձին կարգ,



որ կոչվում են կատուները մշտական աշխատանք չունեն: Գործարաններում նրանք գործ գտնում են միայն ժամանակ առ ժամանակ, միայն այն դէպբում, երբ գործարանատէրերը պէտք ունեն աւելորդ ապրանք պատրաստելու: Բայց հէնց որ նրանց ապրանքի պահանջը քիչանում է, գործարանատէրերը քիչացնում են արդիւնաբերութիւնը, եւ այդ ժամանակ կ առ ուն եր գարձեալ մնում են անփոք ու հացի կարօտ: Ինչ ասել կուղէ, որ այդ թշուառ մարդկանց կեանքը կեանք չէ, այլ մշտական շարչարանք: Բայց բաւական չէ, որ կ առ ուն եր ն իրանք թշուառ կեանք են վարում: Կրանք պատճառ են լինում բոլոր միւս բանւորների գնի քիչացնելուն: Խակ գործարանատէրերը, աշքի առջեւ ունենալով կ առ ուն եր ին, չեն զւանում լաւ ճնշելու իրանց բանւորներին: Հէնց որ մի պստիկ գլուխ գոյնութիւն — «գնա կորիր. գործ եղած աեղը՝ մարդ միշտ կը գտնեմ»: Եթէ գուշու գար այնպիսի մէկ օրէնք, որ գործարանատէրերին արգիլէր բանւորին 10 ժամկց աւելի աշխատացնել 24 ժամեայ ընթացքում, այն ժամանակ կարելի է կ առ ուն եր ն իրանց համար գործ, աշխատանք գտնէին, դադարէին «բանւորական ձեռքերի» գինը բիշացնելուն նպաստել, եւ աշխատանքի վճարն աւելի կը բարձրուանաբ:

Մեր կ առ ուն եր ի նման բանւորներ շատ կան ոչ միայն Ռուսաստանում: Արտասահմանումն նրանց թիւը Ռուսաստանից պակաս չէ: Այդ կարգի բանւորները գիտութեան մէջ կրում են մէկ առանձին անուն: Նրանք կոչվում են պահանջ և տիր բանւորակ ական զօրք: Այժմ՝ ամենքը հասկանում են, որ ինչքան քիչ լինի այդ զօրք ի ցու, այնքան բարձր կը լինի աշխատանքի վճարը:

Եւ դա գեռ բոլորը չէ: Լաւ բաներ շատ կան իւրաքանչիւր խանութում, իւրաքանչիւր շուկայում: Բայց նրանց ձեզ ձրի չեն տալ: Պէտք է ստակ վճարել ով

շատ ստակ ունի նա շատ բան է գնում: Բանւորի ստակը շատ քիչ է: Այդ պատճառով նա քիչ է գնում: Ն ը ա գ ը ն ո լ ո յ ժ լ մ ե ծ չ է: Եւ որբան ցածր լինի նրա աշխատանքի վճարը այնքան էլ նա քիչ կունենայ այդ ախորժելի եւ օգտակար ցմից: Արդեօք շատ բան կարող է գնել մի խեղճ, անօմի կ առ ու: Երբ որ կարձացնում են բանւորական օրը աշխատանքի վճարը բարձրանում է, բանւորի գրպանում աւելի ստակ է զնեգզնգում: Ն ը ա գ ն ո լ ո յ ժ ն ա ե լ ա ն ո ւ մ է: Կա աւելի շատ ապրանք է գնում: Խոկ ով վճարը աշխատանքի վճարը: Այն բանւորները հնչքան շատ գնեն ապրանքներ — այնքան էլ շատ բանւոր կը վարձեն գործարանատէրերը: Խոկ այդ տէրերն ինչքան շատ պէտք ունենան բանւորների, նշնքան էլ բարձրը կը լինի աշխատանքի վճարը:

Ուրեմն, բանւոր ական օրը կարգաց ը ը ր ա ծ ժ ա մ ա ն ա կ ա շ խ ա տ ա ն ք ի վ ճ ա ր ը կ ա ւ ե լ ա ն ա յ ն ա ե ւ ա յ ն բ ա ն ի ց, ո ր կ ա ւ ե լ ա ն ա յ ր ա ն ւ ո ր ի գ ն ո լ ո յ ժ լ ը:

Բայց աղա գործարանատէրերն էլ յիմար չեն: Կրանց հաշին չի գալիս աշխատանքի գինը բարձրացնելը: Այդ պատճառով բանւորական օրը կարձացրած միջոցին՝ նրանք կախատեն գոնծածել աւելի շատ մեք բ ե ն ա յ: Մեքենաները կարող են շատ ու շատ բանւորների տեղը բռնել: Մեքենաների գիւտի շարժառիթը շատ անդամ եղել է հէնց աղին, որ գործարանատէրերը չեն ուղեցել աւելացնել վճարը եւ առ հասարակ զիջանել բանւորներին: Քանի քանի լաւ մեքենաների գիւտն ընդլիայում արած են գործ ագութիւն եր ի միջոցին: Կար մեքենաների մուտք գործին անշուշտ խոչնուռ կը լինի գելթ մինչեւ մէկ աստիճան վճարի այն չափով բարձրանալուն, ինչ չափով պէտք է բարձրանար բանւորական օրի կարձացնելուց: Բայց գրանից, բանւորական կարճ օր եղած ժամանակն էլ գործարանից,

րանատերերը կարող են, դարձեալ իրանց մեքենաների օգնութեամբ, ստիպել բանւորներին աշխատել նոյնչափ, կամ գրեթե նոյնչափ, որչափ նրանք աշխատում էին առաջ: Յայտնի է, որ մի մարդ 10 ժամնայ ընթացքում երբեմն կը շնէ գրեթե նոյնչափ, որչափ 15 ժամում, ևթէ աշխատէ աւելի ու ի ովք աւելի տոկուն ու թթե աւ մը: Գործարանատէրերը կարող են բանւորներին ստիպել աւելի աշխատ ավելի ու թթե ամբ բանելը օրով էլ նրանցից կը քամեն նոյնքան, որքան երկար օրով: Մեքենագործներն այդ բանում շատ վարպետ են: Եթէ այդպէս լինի, այն ժամանակ աշխատանքի վճարը չե բարձրանալ բանւորական օրի կարճացրելուց: Բայց եւ այն պէս այդ գ կ արձաց նելը դարձեալ շատ շահ աւել տէ բանւորի համար:

Բանւորական երկար օրը եւ վատ սնունդն այնքան հալում, մաշում են բանւորին, որ նա ծերանումէ վաղահաս: Ա տատի ստի կան (վիճակագրութիւնը) ցոյց է ամենը որ “բարի աղաներին միջն կեանքը ստէպ երկու անգամ աւելի է բանւորների միջն կեանքից:”\*)

\*) Թէ ինչ է նշանակում միջն կեանք — դա ինքն ըստ ինքեան հասկանալի է: Յամենայն գեպս՝ բացատրենք: Վերցնենք 1000 աղքատ, որ ծնվել են այս 1891 թւին: Կրանցից մի քանիսը կը մեռնեն շարաթ էլ չապրած, միւները կապրեն մի քանի ամիս, երբորդները կապրեն մինչեւ մի, երկու, հինգ տարեկան հասակը ըորրորդները կը մեռնեն 10-15 տարեկանից ոչ շուտ, իսկ մի քանիսներն էլ կը մեռնեն ծերացած: Հաշվենք թէ որքան տարի են ապրել ամենը միասին: Կրտսանանք, գիցուք, 20 հազար տարի: Բաժանենք դա 1000-ի վրա: Կը ստանանք 20: Դա նշանակումէ, թէ եթէ բոլոր աղքատներն ապրէին միաչափ երկար ժա-

վհա թէ ինչու բանւորական օրի կարճացնելն օգտակար կը լինէր բանւորներին, թէկուղ հէնց այն դէպքումն էլ եթէ գործարանատէրերը, գործածելով նոր մեքենաներ, նորանոր բանւորների ձեռների պէտք չունենային: Ճիշդ է, աշխատանքի վճարը կը մնար նոյնը, ինչ որ առաջ էր: Բայց եւ այնպէս բանւորներին աւելի ժամանակ կունենային համարստութեան համար: Այն ժամանակ աւելի քիչ հիւանդութիւններ, աւելի քիչ մահի դէպքերը կը լինէին բանւորների մէջ: Եւ այդ արդէն ինքն ըստ ինքեան էլ բանէն է: Ովկ հաւասար աւնի հիւանդանալու, եւ կամ վաղամեռ լինելու:

Այժմ անգիտական բանւորները — ոչ թէ օրէնքով այլ սովորութեամբ — 24 ժամնայ ընթացքում 10 ժամից առաւել չեն բանում: Իսկ առաջ աշխատում էին անհամեմատ աւելի: Եւ նկատված է, որ սկսած այն ժամանակից, երբ նրանց աշխատանքի օրը կարճացաւ, նրանք աւելի առողջ են, քան առաջ էին:

Կրկնութենք, բանւորի առողջութեան աւելի կազմակութումն արդէն ինքն ըստ ինքեան շատ կարեւոր բան է: Նրանք կարող են եւ պէտք է պահանջեն աշխատանքի օրւայ կարճացնելը հէնց թէկուղ լոկ իրանց առողջութեան համար: Սակայն բացի առողջութիւնից աշխատանքի օրւայ կարճացնելը նրանց կրկին մէկ օգուտ է տալիս, շատ մէծ, թէրեւս ամենամեծ օգուտը: Կ ա

մանակ, իւրաքանչիւրը նրանցից ապրած կը լինէր 20 տարի: Հէնց այդ քանի տարին է, որ կազմումէ աղքատի միշտն կ եւ անքը: Ճիշդ այդպէս էլ կարելի է հաշիւտեսնել նաև հարուստ մարդերի մի ջին կ եւ անքի մասին: Այդ հաշիւր մի քանի երկաներում տեսել են, եւ գտել են, որ միջին հաշով հարուստ մարդիկն ապրում են աղքատներից երկու անգամ աւելի:

տ ա լ ի ս է ն ը ա ն ց ա զ ա տ ժ ա մ ա ն ա կ, ն ը  
հ ա ր կ ա ւ ո ր է ո ւ ս ա ն ե լ ո ւ, ս ո վ ո ր ե լ ո ւ հ ա  
մ ա ր:

Գ ժ ո ւ ա ր է ո ւ ս ա ն ե լ ա յ ն մ ա ր դ ո ւ ն, ո ր 24 ժ ա մ ա յ  
մ է ջ ա շ խ ա տ ո ւ մ է 13-14 ժ ա մ: Ա յ լ ա ե լ ա ր դ է ն ո ւ ս ա  
ն ե լ գ ր ք ե ր ի մ ա ս ի ն մ ո ա ծ ե լ չ է կ ա ր ե լ ի: Ե ր ա ն ի ի ր ա ն,  
ե թ է հ ա ն դ ս տ ա ն ա յ ե ւ ք ո ւ ն լ ի ն ի, ո ր մ ի ւ ս օ ր ը ս կ ս է  
գ ա ր ձ ե ա լ ն ո յ ն տ ա ֆ ա ն ա կ ի ր ա շ խ ա տ ա ն ք ր ի: \*) Ճ ի շ դ է, կ ա ն  
ա յ ն պ ի ս ի մ ա ր դ ի կ, ո ր ո ն ք ե ւ ա յ դ պ ի ս ի ա շ խ ա տ ա ն ք ր ի մ ի ջ ո  
ց ի ն ժ ա մ ա ն ա կ ե ն տ ա ն ո ւ մ գ ր ք ո յ կ կ ա ր դ ա լ ո ւ: Ե ր ե ք տ ա ր ի  
ս ր ա ն ի ց ա ռ ա ջ լ ր ա գ ի բ ն ե ր ո ւ մ գ ր ե լ է ի ն, թ է Պ ե տ ե ր բ ո ւ ր  
գ ո ւ մ մ ե ռ ա մ մ ի գ ր ք ա ւ ո ր, ո ր ի մ օ տ կ ա ր գ ր ք ե ր ի մ է  
ա մ բ ո ղ լ ի ո, Ո ր ո ւ ս ա ս տ ա ն ի ա մ ե ն ա լ ա ւ գ ր ո լ ե ր ի գ ր ո ւ ա ծ ք  
ն ե ր ի ց: Բ ա յ ց գ ր ա հ ա մ ա ր մ ա ր դ պ է տ ք է շ ա տ մ ե ծ հ ա  
ւ ա ս ո ւ ն ե ն ա յ գ է պ ի ո ւ ս ո ւ մ ը, ո ր ա յ ն պ է ս լ ի ն ի, ի ն չ պ է ս  
ա յ դ գ ո ր ծ ա ւ ո ր ն է ր: Ա մ ե ն մ ա ր դ ա յ դ պ ի ս ի հ ա ւ ա ս չ ո ն ի  
ե ւ բ ա ց ի հ ա ւ ա ս ի ց, պ է տ ք է ա ս ո ղ ջ ո ւ մ ի ն է լ ո ւ ն ե ն ա լ:  
Տ կ ա ր մ ա ր դ ը ո ր ք ա ն է լ ն ա մ ե ծ հ ա ւ ա ս ո ւ ն ե ն ա յ, գ ժ ո ւ ա  
ր ո ւ մ ե ա մ է կ ր ն ս տ է գ ի բ ը կ ա ր դ ա լ ո ւ 13 ժ ա մ ա շ խ ա տ ե  
լ ո ւ ց յ ե տ ո յ: Մ ի ն չ ե ռ ը ա ն ս տ ա ն ե ր ի ն ո ւ ս ա ն ե լ ա ն հ ր ա  
ժ ե շ ո ւ է: Ա ռ ա ն ց գ ր ա ն ն ր ա ն ք ը ե ն կ ա ր ո ղ ա զ ա տ վ ե լ կ ա  
պ ի տ ա լ ի ս տ ա ն ե ր ի լ ո ւ ծ ի ց: Ո ի ն չ ե ռ ա ն գ ա մ ա ւ ե լ ի: Ո ր չ ա փ  
շ ա տ ժ ա մ ա ն ա կ տ ե ր է, ն ո յ ն չ ա փ ա ւ ե լ ի կ ր ծ ա ն ր ա ն ա յ բ ա ն  
ո ր ն ե ր ի վ ի ճ ա կ լ ը ե թ է ն ր ա ն ք չ ա շ խ ա տ ե ն ի ր ե ր ի ն ե ր կ ա յ  
կ ա ր դ ո ւ կ ա ն ն ի ց ա զ ա տ վ ե լ մ ի ա ն դ ա մ ի ց ը ն դ մ ի շ ո ւ: Ա յ լ  
է լ ա պ ա ց ո ւ ց վ ա ծ ո ւ հ ա ս տ ա տ վ ա ծ է գ ի տ ո ւ մ ե ա մ է:

\*) Ե ւ գ ա է լ մ ի խ օ ս է, ո ր ա ս վ ո ւ մ է — տ ա ժ  
ն ա կ ի ր ա շ խ ա տ ա ն ք: Խ ի կ ա պ է ս տ ա ժ ա ն ա կ ի ր ն ե ր ն  
ա մ ե ն տ ե լ ա զ ա ս բ ա ն ո ր ն ե ր ի ց ք ի չ ե ն ա շ խ ա տ ո ւ մ: Ե ւ ը ս  
տ է պ ի ս կ կ ե ր ա կ ր լ ո ւ մ ե ն ա ւ ե լ ի լ ա ւ, բ ա ն ա յ դ ա զ ա ս ո ւ  
ո ք ի ա ռ ջ ե ւ ե ւ ո չ ն չ ո վ յ ա ն ց ա պ ա ր տ չ ե ղ ա ծ մ ա ր դ ի կ ը:

Ա բ ե ւ մ ո ե ա ն Ե ւ ր ո պ ա յ ի ո ւ Ա մ բ ր ի կ ա յ ի բ ա ն ո ր ն ե ր ն ա յ դ  
բ ո լ ո ր ը հ ա ս կ ա ց ե լ ե ն: Ա յ լ պ ա տ մ ա ս ո վ է լ ն ր ա ն ք պ ա  
հ ա ն ջ ո ւ մ ե ն ա շ խ ա տ ա ն ք ի օ ր ւ ա յ կ ա ր ձ ա ց ն ե լ ը մ ի ն չ ե ւ ո ւ թ  
ժ ա մ: Մ ի ա ն գ ա մ բ ա ն ո ր ն ե ր ը կ ը հ ա մ ե ն ա յ դ կ ե տ ի ն, ա յ ն  
ժ ա մ ա ն ա կ գ ո ր ծ ե ր ն ա ռ ա ջ կ ե ր թ ա ն ո ւ թ է հ ի մ ա կ ւ ա յ պ է ս:  
Ա յ ն ժ ա մ ա ն ա կ ն ե ր կ ա յ հ ա ս ա ր ա կ ա մ ն կ ա ր դ ո ւ կ ա ն ո ն ն  
ա յ լ ե ւ ս ե ր կ ա ր գ ո ւ մ ի ն ե ր կ ա յ հ ա ս ա ր ա կ ա մ ն կ ա ր դ ո ւ կ ա ն ո ն ն ա յ լ

Ո ւ շ ա զ ր ո ւ մ ի ն ա յ դ ա ր է ք, ո ր ո ւ թ ժ ա մ ե ա յ օ ր ը պ ա  
հ ա ն ջ ո ւ մ ե ն ն ո ւ թ է պ ա յ ս կ ա մ ա յ ն ե ր կ ի բ ա ն ո ր ն ե ր ը, ա յ լ  
կ ա տ ա ր ե լ ա պ է ս ա մ բ ո ղ ջ ա ղ ա ք ա կ ր թ վ ա ծ ա շ խ ա ր հ ի բ ա ն  
ո ր ն ե ր ը: Մ ի ա յ ն յ ե տ ը ն կ ա ծ, ք ի չ ք ա ղ ա ք ա կ ր թ վ ա ծ ե ր կ ը  
ն ե ր ո ւ մ է, ո ր գ ր ա մ ա ս ի ն խ օ ս ք ը կ ա յ: Բ ա յ ց ե ւ ա յ դ պ է ս  
կ ի ե ր կ ը ն ե ր ո ւ մ կ ա ր դ կ ա ն ո ն ն է լ ո ւ ր ի շ ե ս ա կ է: Ա յ ն  
տ ե լ կ ա ս ի տ ա լ ի ս տ ա ն ե ր ք ի չ է կ ա ն, ք ի չ ե ն վ ա ր ձ ո ւ բ ա ն ո ր  
ն ե ր ը: Ա յ թ ժ ա մ ե ա յ օ ր ա յ ն ս ե լ պ ա հ ա ն ջ ո ղ է լ ք կ ա յ:

Ը ն գ լ ի ս ա կ ա ն բ ա ն ո ր ո ւ ն պ ա յ կ է ս չ է ա պ ր ո ւ մ ի ն չ պ է ս ա պ  
ր ո ւ մ է գ ե ր մ ա ն ա կ ա ն բ ա ն ո ր ը գ ե ր մ ա ն ա կ ա ն ն ա յ ն պ է ս չ է  
ա պ ր ո ւ մ ի ն չ պ է ս փ ր ա ն ս ի ա կ ա ն ը կ ա մ ի տ ա լ ա կ ա ն ը: Բ ա յ ց չ ը  
ն ա յ ա ծ գ ր ա ն, ա ն գ լ ի ս ա կ ա ն բ ա ն ո ր ը գ ա ն վ ո ւ մ է է ա պ է ս  
մ ի ե ւ ն ո յ ն գ ր ո ւ թ է ա ն մ մ է ջ ի ն չ ո ր գ ե ր  
մ ա ն ա կ ա ն ը, գ ր ա ն ս ի ա կ ա ն ը կ ա մ ի տ ա լ ա կ ա ն ը ի տ ա  
լ ա կ ա ն ը: Ն ր ա ն ց ն շ ն ա մ ի ն մ ի ե ւ ն ո յ ն ն է ա ն ե ռ ք բ ե ր ե լ  
ա յ ն պ ի ս ի հ ա ս ա ր ա կ ա կ ա ն կ ա ր դ ո ւ կ ա ն ն ո ր ն ե ր ը Ա հ ա ն ո ւ  
ա ո ր ն ե ր ի ն գ ր ա ն կ ա ր ձ ն է ն ո յ ն ի ր ա ն ց տ է ր ը: Ա հ ա ն ո ւ չ է հ ա մ ա ր  
ա մ ե ն տ ե լ գ ո ր ծ ը հ ա ս կ ա ց ո ւ բ ա ն ո ր ն ե ր ը մ ի ւ ս ե ր կ ը ն ե ր  
բ ա ն ո ր ն ե ր ի ն կ ա տ ո ւ մ ե ն ն ի բ ր ե ւ ի բ ա ն ն ը ն կ ե ր ո ւ կ ա ն  
ն ր ա ն ց յ ա փ տ ա լ ո ւ ս ի ա մ ե ա ն ց: Ա ն ց ե ա լ տ ա ր ի գ ր ա ն  
մ ի մ ե ա ն ց: Ա ր ա ն կ ո գ ն ո ւ մ ե ն ն մ ի մ ե ա ն ց: Ա ն ց ե ա լ տ ա ր ի գ ր ա ն

եղաւ անգլիական բանւորների կօղմից: Նրանց ոյժ տվին ու օգնեցին ֆրանսիականները: Եւ դա հաղթագէպ չէ: Բանւորները դրանից ել աւելի են անում: Այս տարի գարնան Պարիզում կայացաւ զանազան երկրների (գլխաւորապէս Քելքիայի, Ֆրանսիայի, Անգլիայի, Գերմանիայի) ածխահանգերի բանւորների ժողովը: Ժողովում որոշվեց կազմել մէկ ընդհանուր մեծ միութիւն բոլոր բաղաքակրթված երկրների այդ կարգի բանւորներից: Երբ այդպիսի միութիւն լինի, բոլոր երկրների ածխահանգերի բանւորները կը կազմեն մի գերդաստան: Ուր ինչ որ պատահէ, Նրանք միմեանց կը պահպանեն, ոյժ կը տան, կօգնեն, եւ այդպիսով աւելի հեշտութեամբ կը մաքառեն իրանց տէրերի հետ:

Բոլոր քաղաքակրթված երկրների բանւորները պէտք է գործեն եւ արդէն ամեն կարեւոր գէպքերում գործում են համախոչ ու ընդհանուր կերպով: Առանց փոխադարձ օգնութեան ու պահպանութեան բանւորները երբէք չեն աջողիկ յաղթել տէրերին:

Ութժամեայ օրը ձեռք բերելու վճիռը կայացաւ 1889 թ. Պարիզում բանւորների մի ջազ զ ա յ ի ն ժողովում: Մի ջազ զ ա յ ի ն ժողովները կոչվում են այն ժողովները, ուր գումարվում են ոչ թէ մի, այլ շատ տէրութիւնների պատգամաւորները: Պարիզի բանւորական միջազգային ժողովում (կօնքրէտում) գտնվում էին պատգամաւորները հետեւեալ երկրների բանւորների կողմից՝ Անգլիայի, Գերմանիայի, Աւստրիայի, Բելգիայի, Իտալիայի, Հոլանդիայի, Սպանիայի, Շվեյցարիայի, Գալիսիայի, Ամերիկայի եւ այլն:

Պարիզի ժողովը վճռեց, թէ (ամեն) տարի Ապրիլի 19 (Պայմ 1 արտասահմաննեան օրացցոյն— և 8.) բոլոր երկրների բանւորներն իրանց կառավարութիւններից կը պահպեն այնպիսի մէկ օրէնքի հաստատում, որը բանւորական օրը կը սահմանափակէ մինչեւ ութ ժամ: Կօնդ-

քէոր չը վճռեց, թէ ինչ եղանակով պէտք է պահանջեն բանւորներն այդ օրէնքը: Այդ կէտը պէտք է որոշեն իրանք իրանց համար ամեն-մի երկրի բանւորներն առանձնապէս: Գրեթե ամեն տեղ բանւորները որոշել են Ապրիլի 19-ի օրը չը լին ա տ ե լ ։ Եւ ահա ինչու այդ օրը մէկ անուանեցնէք հ ա մ ա շ լ ա ր հ ի ն տ օ ն բ ա ն ւ ո ւ ո ւ ն ե ր ի ի: Մի քանի երկրներում բանւորները պարլամենտներին (ազգային ժողովներին) ներկայացնում են նաեւ ին դ ր ա գ ր ե ր, որոնց մէջ առաջ են գնում իրանց պահանջները: Վերջապէս, այդ օրն ամեն տեղ ժողովը այն ժողովների ժողովները, գումարումներ են տեղի ունենում, որտեղ հասարակութեանը բացարձում է ութժամեայ օրույ օգուտոր: Այդպիսի ժողովներ երեւմն գումարվում են բաց երկնքի տակ, հրապարակների վրա կամ պարտէզներում: Պատահում է որ այդտեղ ներկայ է լինում հարիւր հաղար բազմութիւն (օրինակ Անգլիայում): Շատ անգամ այդ հարիւր հաղար բազմութիւն բանւորները կանոնաւոր կարգերով, գործակներով եւ երաժշտական խմբերով անցնում են փողոցներով ց ո յ ց ե ր ե ն անում: Մինչեւ հիմա այդպիսի ցոյցեր ամենից լաւ աջողվել են Անգլիայում ու Աւստրիայում:

Բանւորները ինքը ագրակերպ պարլամենտներին, ազգային ժողովներին են դիմում նրա համար, որ այս վերջններըն են օրէնքներ սահմանում: Իսկ բանւորներն ուղղում են, որ ի ր ա ն ց ա շ լ ս ա տ ա ն ք ի օ ր է ն ք ո վ լ ի ն ի կ ը ճ ա տ վ ա ծ: Այդ գէպքում առանց օրէնքի նպատակին չեն հանդիլ եթէ օրէնքը չարգիլէ գործարանատէրին ութժամեայ աւելի աշխատացնել բանւորներին, այն ժամանակ սրանք չեն կարող ձեռք բերել ութժամեայ օրը: Միշտ կը գտնվեն այնպիսի գործարանատէրեր, որոնք կարող կը լինեն հրապարել կամ ստիպել իրանց բանւորներին աւելի աշխատելու: Այդ բանւորները կը վասեն

թէ իրանց, թէ ուրիշներին, կը փչացնեն ամբողջ գործը,  
կը խանգարեն բանորներին ձեռք բերել ուժժամեայ օրը:  
Ուստի մարդուն ուժժամեայ օրը կարող է բոլորովինն  
անկարելի թւալ: Էլ ինչ խօսել ուժժամեայ օրւայ մա-  
սին, երբ ներկայումն աշխատանքի օրը համառմէ մին-  
չեւ 14 ժամի: Բայց արտասահմանում աշխատանքի օրն  
աւելի կարճ է, քան Ուստաստանում: Անդիմայում բան-  
որներն աշխատում են 24 ժամնայ մէջ 10 ժամից ոչ  
աւելի: Ըզէցարիայում օրէնքը աշխատանքի օրը 11 ժամ  
է (Ճիշտ է, այդ օրէնքը ստէպ զանց է առնվում) չէ գործ  
ծագրվում): Գերմանիայում այդ կէտն այլ եւ այլ կեր-  
պով է լինում, տեղ և տեղ աշխատանքի օրը գերմանացի-  
ների մօտ Ուստաստանում եղածից կարճ չէ իսկ առ-  
հասարակ Գերմանիայում աշխատանքի օրն աւելի կարճ  
է, քան Ուստաստանում: Բայց ահա Ամերիկայում տէ-  
ր ու ն ա կ ա ն գործարաններում արդէն հիմա էլ աշ-  
խատում են օրական ուժ ժամից ոչ աւելի: Ամերիկական  
բանորները եւրոպականներից դեռ առաջ սկսել են պա-  
հանջել ուժժամեայ օրը բոլոր մասն ա ւ ո ր գործարնե-  
րի նկատմամբ եւս: Եւրոպական բանորները ոչինչ շահ-  
չունեն ամերիկականներից յետ մնալու: Միանգամից չէ, որ  
բանորները կարող կը լինեն ձեռք բերել ուժժամեայ օ-  
րը: Առաջին անգամին գործարանաթէրերը կաշխատեն  
հաշտվել նրանց հետ աւելի քիչ զիջումով դիցուք, կա-  
ռաջարկեն նրանց տամնըժամեայ օր: Այդ էլ վատ չի լինի:  
Բայց բանորները չեն բաւականանալ դրանով եւ կը պա-  
հանջեն աշխատանքի օրւայ նոր կարճացումն: Վերջապէս,  
կը համանեն ուժժամեայ օրւան: Թէ ինչպիսի ընժացը  
կը բռնեն նրանք զրանից յետոյ — ցցյց կը տայ ժամանակը:  
Գուցէ բանորները պահանջեն՝ աշխատանքի օրը կար-  
ճացնել մինչեւ վեց ժամ: Բայց եւ գուցէ նրանց մեծա-  
մանութիւնը մինչեւ այդ ժամնակներն այնքան կը զար-

գանայ, որ բոլորովին կը փրկվէ, կազատվէ իր տէրե-  
րի լծից. կը կազմակերպէ նոր, ո ց ի ա լ ի ս ա կ ա ն  
կ ա ր գ ո ւ կ ա ն ո ն, որտեղ վար ձ ո ւ բանորներ  
այլ եւս չեն լինիլ: Բոլոր ընդունակ մարդիկը կաշխատեն,  
կը բանեն եւ ոչ թէ տէրերի, այլ իրանց համար, ա մ-  
բանան համարակութեան համար, որից էլ կը ստանան  
իրանց ապրուստի բոլոր միջոցները: Այն ժամանակ արդէն  
իրեւայ, թէ օրական բանի ժամպէտք է աշխատէ, բա-  
նէ իրաքանչիւրը:

III.

Այժմ ընթերցող հասկանումէ, թէ ինչու համար  
են բանորները պահանջում ուժժամեայ օրը: Այժմ նա  
դիտէ, թէ ինչ միտք ունի 19 Ապրիլ (1 Մայիսի) բան-  
որների համաշխարհային տօնը: Բայց գուցէ նա լսել է,  
որ այդ օրն արեւմտեան Եւրոպայում ամեն տեղ բանոր-  
ների գեմ զօրքեր են հանում: Գուցէ նա կարդա-  
ցել է, թէ ինչպէս ֆրանսիայի մի փոքրիկ քաղաքում  
ֆուրմի լինորդներն այս տարի ջարդել սպանել են  
բանորներին (գրանց մէջ կային նաեւ կիներ, ե-  
շատ բանորների) այն պատճառով, որ նրանք պահանջում էին  
ուժժամեայ օրը: Եւ գուցէ նրան անհասկանալի է, թէ ինչ-  
պէս կարող են այդպիսի բաներ պատահել հ ա ն ր ա պ ե-  
տ ո ւ թ ե ա ն մ է ջ: Կամ թերեւս ոչինչ նշանակու-  
թիւն չունի աղատութիւնը: Կամ թերեւս Ճիշտ են ասում  
այն մարդիկը, որոնք հաւատացնում են բանորներին, թէ  
աղատութիւնը նրանց համար ոչ լաւ է, ոչ էլ վատ:

Աշ այ գ մ ա ր գ ի կ ը ս խ ա լ վ ո ւ մ ե ն: Ազա-  
տութիւնը մեծ բան է: Առանց աղատութեան ֆրանսիա-  
